

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐՈՒՄ

Յ.Ս. Ս. Պատրիարք Հայր հեռակալ հեռագիրը յոնց Յորդանանու վեհապետին, անոր գահակալութեան բարերասիկ արեղարձին տալով, 10 Օգոստոսին:

Կ'օգտագործեմ Ձերդ վեհապետութեան զանալուրեան եղանիկ պատենութիւնը վերանորոգելու իմ յարգանքս եւ նուիրումս Հաւիտական Գահին, թէ՛ իմ կողմէն եւ թէ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու հայ համայնքին. եւ կ'աղօրենք Ամենակալ Աստուծոյ որ շնորհէ Ձեր վեհապետութեան երկար կեանք, հանդերձ բարութեամբ եւ եղանկութեամբ, որպէսզի կարենաք պատշաճել Յորդանանը Ձեր յարգանքներով ընդ հովանեաւ Հաւիտական դրօշի, որ միշտ յաղթող պիտի մնայ կամօք Աստուծոյ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ
Տեղապան եւ Ընտրեալ Պատրիարք
Հայոց Նուապէմի

Ի պատասխան վերոյիշեալ հեռագրին, Ն. վեհապետութեանն օտոցուեցաւ հեռակալ հեռագիրը, 13 Օգոստոսին:

Ամենապաշտ.

Պատրիարք Տիրան Ներսոյեան
Նուապէմ

Շնորհակալ եմ Ձեր անկեղծ շնորհաւորութեանց եւ բարի մաղաքանքներուն համար մեր Գահակալութեան արեղարձին տալով:

Եւ - ՀԻՒՍԷՅՆ

Հեռակալ եւ վերոյիշեալ հեռագրի արարելէն ընդգրկել:

1957/8/13

القصر الملكي - عمان

غبطة البطريرك تيران زسويان القدس
أشكركم على تهنيتكم الصادقة وتمنياتكم
الطيبة بذكرى جلوسنا.

الحسين

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՐԱԿԱՆՔ

● Կիր. 30 Յուլիս. — Ս. Պատրիարքը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեորգ Արեղայ Նաղարեան:

● Ուր. 5 Յուլիս. — Վաղուան Նախատեսը պաշտուեցաւ ի Ս. Յակոբի Հանդիսարան էր Գեր. Տ. Սուրէն Եպ. Քէմհան:

● Եր. 6 Յուլիս. — Ս. Հօրն մերոյ Գիւղարի Լուսաւորին գիւս ճեխաբաց տունին առթիւ, Ս. Պատրիարքը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատարան մէջ: Ժամարարն էր, Տանն Կիլիկիոյ Միաբաններէն Կարարար Ս. Աթոռ Ժամանակ Հոգ. Տ. Ներսէս Արք. Փապուհան:

● Կիր. 7 Յուլիս. — Ս. Պատրիարքը մատուցուեցաւ ի Ս. Յակոբի Ժամարարն էր Հոգ. Տ. Ասողիկ Ե. Վրդ. Ղազարեան:

● Դի. 10 Յուլիս. — Թարգմանչաց Հանդիսաւոր Նախատեսները պաշտուեցաւ ի Ս. Յակոբի Հանդիսարան էր Գեր. Տ. Հայկազուն Եպ. Արարահան:

● Ել. 11 Յուլիս. — Ս. Թարգմանչաց վարդապետաց մերոյ Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Օրուան Հանդիսաւոր Ս. Պատրիարքը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց. ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց վարժարանի Տեսուչ Հոգ. Տ. Կիրակի Վրդ. Գարիկեան, ե քարոզեց, ընթացքն ունենալով օրուան ճաշու Աւետարանէն Վիճի երկնային, Նժտ Բարիկ, զի հանեցաւ Հայր ձեր տալ ձեզ զԱրքայութիւնս (Ղուկ. ԺԲ. 32), ու ներկայացուց Ս. Թարգմանչեան շնորհիւ իրագործուած մեծութիւնները մեր փոքր հօգին մէջ: Ս. Պատրիարքի ընթացքին, Ս. Թ. վարժարանի բովանդակ ուսուցչական կազմին ու ուսանողութիւնը առաջան Ս. Հաղորդութիւն. իսկ Ս. Պատրիարքէն ետք. Ամեն. Ս. Պատրիարք Հօր Նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգրձան պաշտօն՝ հայ մշակոյթի բոլոր վաստակաւորներու հոգիներուն ի հանգիստ:

● Եր. 13 Յուլիս. — Վաղուան Նախատեսը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր Նախագահութեամբ:

● Կիր. 14 Յուլիս. — Գիւս Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատրիարքը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան: Մայրութեան խորհուրդին շուրջ քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Պայրաման:

● Ուր. 19 Յուլիս. — Վաղուան Նախատես. Նակի ի Ս. Յակոբ Նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպ. Պողարեան:

● Եր. 20 Յուլիս. — Ս. երկաստան առաւելոց Գիւստոյ: Ս. Պատրիարքը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Պողոսի վերնամասերան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուհան:

● Կիր. 21 Յուլիս. — Ս. Պատրիարքը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերան մէջ: Ժամարարն էր, Տանն Կիլիկիոյ Միա-

բաններէն. Հոգ. Տ. Ներսէս Արղ. Փայտուհեան: Քարոզից Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան: Ժանրանալով «Անդգամն ասաց ի քրտի իւրում թէ ոչ զոյ Աստուած» Սաղմսի խօսքին վրայ (Սաղմ. ԺԳ. 1), և ցոյց տուաւ անդգամութիւնը իբրեւ ատորնացնող ուժ մը մարդէն ներս:

● Դշ. 23-Ուր. 26 Յուլիս. Ս. Աթոռոյս չօրս նորընծայ արեղաները իրենց անդրանիկ Ս. Պատարագները մատուցին Մայր Տաճարին մէջ:

● Ուր. 26 Յուլիս. — Վաղուան նախատուանը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

● Եր. 27 Յուլիս. — Յիւստակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր նորընծաներուն ուսուցիչն ու վարժիչը Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան: Ըստ աւօրտութեան, նորընծայ արեղաները կը սպասարկէին Ս. Խորհուրդին:

— Կէսօրէ վերջի Մայր Տաճարին մէջ մեծ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ Այլակերպութեան նախատեսակը: Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

— Ս. Պատրիարքը նախագահեց նաև իրիկ-նաղէմին՝ Մայր Տաճարին մէջ պաշտուած ձեկեացէն և Հակոբեան արարողութիւններուն:

● Կիր. 28 Յուլիս. — ՎԱՐԳԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեան): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, եզրակացնելով թէ բարձունքներու վրայ և կեանքի տաղտուկներէն հեռու է որ միայն մարդիկ կրնան ալլակերպուիլ. պայծառակերպուիլ հոգիով: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երանանքնոր Տ. Կիւրեղ Պատրիարքի նորակերտ շիրմին քացման արարողութիւնը (Տե՛ս էջ 203):

— Կէսօրէ վերջի, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդգամն», Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ: Ապա կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որմէ ետք Ս. Պատրիարքը կարգաց Ս. Եղիշէ Վարդապետի Այլակերպութեան ճառին աշխարհարար թարգմանութիւնը (Տե՛ս Սիոն, Յունիս 1957, էջ 144):

● Բշ. 29 Յուլիս. — Յիւստակ մեռելոց: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղբի: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեանի նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն, նախ Տաճարին գաւթիքը՝ Երանանքնոր Տ. Կիւրեղ Պորք: Հօր շիրմին վրայ, ապա նորն կրատան և Զամ-Թաղի գերեզմանավայրերուն մէջ:

● Ուր. 2 Օգոստ. — Վաղուան նախատուանը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եր. 3 Օգոստ. — Ս. Թաղեալի առաւելոյն եւ Սանդիսոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Դիսաղբի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:

● Կիր. 4 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամաս. բան մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, եզրակացնելով թէ մարդ միշտ հակամէտ է վորձութեան մէջ ինչու. լու. սակայն միշտ ալ ընդունակ է իր սայթա. քուններէն ու հոգեկան անկումներէն կրկն բարձրանալու. որուն համար. սակայն. նախապայման է որ ան գիտակցութիւնը ունենայ իր անկատարութեան ու Տիրոջ շնորհք խնդրէ: Ժօտենալու համար կատարեալին՝ Աստուծոյ Ս. Պատարագէն ետք տեղի ունեցաւ զիպողորն. նէքսի արարողութիւն՝ նախագահութեամբ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեանի:

● Կիր. 11 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբի Ժամարարն էր Հոգ. Տ. Դաւիթ Արղ. Սահակեան: Քարոզեց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիւնեան, բնարան ունենալով «Աւսարուք յինէն, զի հեղ եմ և խոնարհ արտիւն» (Մատթ. ԺԱ. 29), ըսելով թէ խոնարհութիւնը հեղութիւնը քրիստոնէութեամբ էր միայն որ ի պատուի եղող առաքինութիւններ դարձան, որոնցմով մարդ կրնայ բարձրանալ:

● Կիր. 18 Օգոստ. — Բարեկենդան Ս. Աստուծամկի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան: Քարոզեց Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան, յիշ ռեննալով օրուան Աւետարանի ընթերց. ուսածէն անդամալոյծի բժշկութեան պարագան, և Քրիստոսի այս, ինչպէս նաև միւս բժշկութիւններէն եղբակացուց թէ հաւատքը նախապայման է բժշկութեան, և թէ հիւանդութիւնները շատ անգամ արգիւնք են մեղքին ու քաւոյական և ֆիզիքական օրէնքներու զանցումին:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

● Եշ. 27 Յունիս. — Կէսօրէ վերջի, Քաղաքի Թէրա-Սանթա զոյրոցի աւաղերի և լկայականաց քաշխուսի հանդէսին, ներկայ գտնուեցան Ս. Թ. Վարժարանի Տեսուչ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Դարիկեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Դշ. 3 Յուլիս. — Հոգ. Տ. Ներսէս Արղ. Փայտուհեան և Հոգ. Տ. Զաւէն Արղ. Արղումեանեան հիւրարար ժամանեցին Ս. Աթոռ: Առաջինը մեկնեցաւ Բշ. Յուլիս 29ին, իսկ երկրորդը՝ Դշ. Օգոստոս 6ին:

● Եշ. 4 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 180րդ տարեդարձին առթիւ. Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տըրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Բշ. 8 Յուլիս. — Իսլամաց Գուրպան պայրամի տունին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր հետ ունենալով Հոգ. Տ. Հայկասեր

Վրդ. Պայրամանը և Տիար Կարպիս Հինգլեանը, շնորհաւորութեան գնաց Քաղաքիս Վսեմ. Մուհաֆէզին, Ոստիկանապետին, Վսեմ. Միւֆթիին և Իրաքեան, Սէուտի Արարիոյ և Եգիպտական Հիւպատոսներուն:

● Եշ. 18 Յուլիս. — Սպանիոյ ազգային տունին առթիւ. Սպանական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրաման և Տիար Կարպիս Հինգլեան:

● Ուր. 19 Յուլիս. — Տիկ. Յրէտէրթէ Վէսթըրի կողմէ. Ի պատիւ Տօքթ. և Տիկ. Էլսընի, Ամերիկեան Քոյօնի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Տիար Կարպիս Հինգլեան:

● Բշ. 22 Յուլիս. — Պեմբաքայի անկախութեան 118րդ տարեդարձին առթիւ. Պեմբական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմ. հաճեան, Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրաման և Տիար Կարպիս Հինգլեան:

● Գշ. 23 Յուլիս. — Եգիպտոսի ազգային տունին առթիւ, Եգիպտական Ընդհ. Հիւպատոսին կողմէ տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրաման և Տիար Կարպիս Հինգլեան:

● Կիր. 4 Օգոստ. — Ասորեաց Հոմսի Պատրիարքի մահուան քառասունքին առթիւ, Ասորեաց Ս. Մարկոս եկեղեցիին մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան և Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիկեան:

● Բշ. 5 Օգոստ. — Իրաքի Հայոց Առաջնորդ և Ս. Ուխտիս Միարան Հոգ. Տ. Զգոն Ծ. Վրդ. Տէր Եսկոբեան ժամանեց Ս. Աթոռ:

● Դշ. 7 Օգոստ. — Տէր և Տիկին Անտրիւ Գիլհորի կողմէ, Ի պատիւ Ամերիկեան Նոր Հիւպատոսի և Իր Տիկնոջ՝ Ֆրանքլինի տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Իր հետ ունենալով Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանը և Տիար Կարպիս Հինգլեանը:

● Ծր. 10 Օգոստ. — Կէսօրէ առաջ ժամը 10.30ին, քաղաքիս Անկլիքան Գեր. Մաքրինէս Արքեպս. իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր. որ ընդունեց զինք Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ, Ի ներկայութեան Միարան Հայրերու:

● Կիր. 11 Օգոստ. — Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի գահակալութեան 5րդ տարեդարձի առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, հետն ունենալով Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեանը, գնաց Ամման, Արքունի Պալատ և արձանագրեց իր անունը շնորհաւորութեանց այցելուներու տոմարին մէջ:

● Բշ. 12 Օգոստ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Ամմանի Հոգեւոր Հովիւ Տ. Վազգէն Աբեղան, ներկայ եղաւ պետական մեծ ճակերոյթին, որ տրուած էր Վարչապետին կողմէ, Զարքայի մէջ, Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի գահակալութեան տարեդարձին առթիւ, ներկայ էին Վեհ. Թագաւորը, Նախարարներ, օտար տէրութեանց ներկայացուցիչներ և պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ:

— Օգոստին գծով Ս. Աթոռ ժամանեց Եւրոպայի Հայոց Կաթող. Պատուիրակ և Ս. Ուխտիս Միարան Գեր. Տ. Սիւրօրէ Եպս. Մանուկեան, Իրեն կ'ընկերանային Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքանահայրն՝ որ երկու շաբաթներէ ի վեր օդափոխութեան համար կը գտնուէր Լիբանան:

Գեր. Տ. Սիւրօրէ Եպս. ընդունուեցաւ շրջապատուող Նախ Մայր Տաճար, ապա հանդերձ Միարանութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր տեղի ունեցան բարեկալուստի խօսքեր և հիւրասիրութիւն:

● Գշ. 13 Օգոստ. — Ֆրանչիսկեանց Միարանութեան Նորընտիր Կիւսթոս Գեր. Աֆրէտօ Փօլիտօրի քաղաք ժամանելուն առթիւ արքունած ընդունելութեան ներկայ գտնուեցան, յանուն Պատրիարքարանիս, Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան և Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրաման:

● Դշ. 21 Օգոստ. — Առաւօտեան ժամը 9ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Իր հետ ունենալով Գեր. Տ. Ս. Սուրէն և Սիւրօրէ Եպիսկոպոսները, Հոգ. Տ. Զգոն Ծ. Վրդ.ը, Հոգ. Տ. Հայկասեր Վրդ.ը, ինչպէս նաև Տիար Կարպիս Հինգլեանը, պաշտօնական այցելութիւն տուաւ Երուսաղէմի և Քերքոնի չըջանին Նորընտիր Զինուորական Կառավարիչ Հաթան Պէյ Քէթիպի՝ Կառավարչատան մէջ:

— Ժամ մը ետք, Ֆրանչիսկեանց Միարանութեան Նորընտիր Կիւսթոսը, հանդերձ Միարանութեան, իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Միարանութեան, Հոգ. հիւրը ընդունուեցաւ բովանդակ Միարանութեան կողմէ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

● Եշ. 22 Օգոստ. — Առաւօտեան ժամը 10ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Իր հետ ունենալով Հոգ. Տ. Տ. Թորգոմ և Կիւրեղ վարդապետները, ինչպէս նաև Գաւազանակիր Հոգ. Տ. Լեւոն Աբեղան, փոխադարձ այցելութիւն տուաւ քաղաքիս Անկլիքան Գեր. Տ. Մաքրինէս Արքեպս.ին՝ Իրենց եպիսկոպոսարանին մէջ:

— Երեկոյեան Ս. Աթոռ ժամանեց Փարիզի Հայ Ազգային Թանգարանի հիմնադիր Տիար Ալպէրթ Աշնեան:

● Ուր. 23 Օգոստ. — Առաւօտեան ժամը 10ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Ի զլուս Միարանութեան, փոխադարձ այցելութիւն տուաւ Ս. Երկրիս Ֆրանչիսկեանց Միարանութեան Նորընտիր Պետին:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՄՆԵՐ Ս. ԱԹՈՌՈՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա. — Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի

Կիրակի, 7 Յուլիսի կէսօրէ վերջ ժամը 3ին, ժառանգաւորաց վարժարանի բակի հինաւոր ընթացիկին ներքե հաստատուած շարժական բեմին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի ամալիերէի հանդէսը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր. և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ժողովուրդի բազմութեան:

Երկու ժամերու ընթացքին, Մանկապարտեզի փոքրիկները յաջորդաբար և յաջող կերպով կատարեցին արտասանութիւններ (հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով). երգեր, պարեր, մարզանքներ, և այլն, որոնք ի յայտ կը բերէին վարժարանի Տեսչութեան հոգածութիւնն ու Մանկապարտեզի ուսուցչական կազմին տարուան մը նուիրեալ ու խնամքոտ աշխատանքին արգասիքը:

Հանդէսի աւարտին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը բաժնեց Մանկապարտեզի 34 ընթացաւոր փոքրիկներուն վկայականները. և տալէ ետք անոնց իր օրհնութիւնն ու պատգամը փակեց հանդէսը Պատգամներով ու Տէրունական աղօթքով:

Բ. — Ս. Թարգմանչաց Վարժարանի

Պայլիկներու երգման արարողութիւնը

11 Յուլիս, Լինգշարթի, Ս. Թարգմանչաց տանի երեկոյեան ժամը 7ին, ժառ. վարժարանի օրահին մէջ կատարուեցաւ Ս. Թ. Վարժարանի 35 Պայլիկներու և 15 Սկաուտներու երգման արարողութիւնը. նախագահութեամբ Ամեն. Սրբ. Պատրիարք Զօր. և ի ներկայութեան Միաբանութեան, վարժարանի աշակերտութեան և ծնողներու ու հրաւիրեալներու բազմութեան:

Եղան բանախօսութիւններ՝ Սկաուտութեան և անոր կատարած դերին ու անհրաժեշտութեան մասին, Արեւոյշներու Խմբապետուհի Որ. Ազիւլ Եադուպեան և Պայլիկապետ Պողոս Արքանամանի կողմէ, ինչպէս նաև երգեր ու արտասանութիւններ վարժարանի Սկաուտներուն կողմէ: Ապա կատարուեցաւ երգման արարողութիւնը: Հանդէսը փակեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, խօսելով Սկաուտիզմի ծագման և նշանակութեան շուրջ ու իր օրհնութիւնը տալով Սկաուտներուն:

Գ. — Հերոսման Ազգ. Վարժարանի, Ամման

14 Յուլիս, Կիրակի առաւօտեան ժամը 10ին Ամմանի Բէթրա սինէմային մէջ կատարուեցաւ

տեղւոյն Հեթումեան աղգային երկուսն փաթարանի ամալիերէի հանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր. ներկայ էր խոսն բազմութիւն ժողովուրդեան:

Հանդէսը տեղի աւելի քան երեք ժամը, որոնց ընթացքին հանդիսականները վայելցին վարժարանի աշակերտութեան կողմէ եղած պարերը, երգերը արտասանութիւններն ու օղորդները: Վարժարանի Տեսչ. Զօր. Ս. Վազգէն Արեղան կարգաց վարժարանի միամեայ դործու, նշանակեան տեղեկագիրը: Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց վարժարանի նախակրթարանի 7 և Մանկապարտեզի 20 շրջանաւորներու վկայականներու և յաջող աշակերտներու մրցանակներու բաշխումը ու իր փակման խօսքէն ետք տուաւ իր օրհնութիւնը վարժարանի ուսանողութեան:

Դ. — Ս. Թարգմանչաց Նախակրթարանի և Ներդրողական բաժնի. — Նոյն երեկոյեան ժամը 7ին, ժառանգ. վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Թ. Վարժարանի նախակրթարանի և Ներդրողական բաժնի ամալիերէի հանդէսը, որուն կրցաւ հասնիլ և նախագահել Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ներկայ էին բովանդակ Միաբանութիւնն ու ծնողներու և ժողովուրդի հոծ բազմութիւն:

Հանդէսը սկսաւ «Որք դարգարեցին» Թարգմանչաց շարականի երգեցողութեամբ, որմէ ետք իրարործուեցաւ աւելի քան երկու քուկէս ժամերու տեղուցութեամբ ճոխ յայտագիր մը: Ներդրողական բաժնի ընթացաւարտներէն ուսմք բանախօսեցին. կարդացուեցան շարագրութիւններ, հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով: Նոյն լեզուներով, ինչպէս նաև Ֆրանսերէնով եղան արտասանութիւններ: Տեղի ունեցան նաև մեներգներ, ու խմբերգներ՝ ձեռնհաս զեկափարութեամբ Զօր. Ս. Թարգմ. Վրդ. Ս. Վարժարանի Տեսչ. Զօր. Ս. Կիւրեղ Վրդ. կարգաց վարժարանի տարեկան տեղեկագիրը, որմէ կ'ընենք հետեւել մէջբերումները:

«Թիւ աշակերտութեան. — Տարւոյս ընթացքին մեր աշակերտութեան ընդհանուր թիւն էր 400. որուն 210ը աղջիկներէ, իսկ 190ը կը բաղկանար տղաների, Առնց 37ը հետեւեցան երկրորդական վարժարանի, 233ը նախակրթարանի և 130ը Մանկապարտեզի դասընթացներուն:

Նախորդ տարիներու բաղդատմամբ մեր աշակերտներու թիւին զգալի պակասը հետեւանքն է երուսաղէմի անտեսական և բաղարական պայմաններու արդիւնք՝ երուսաղէմարանակ մեր ժողովուրդի

մեծաթիւ արտագաղթին ղէպի Ամբիկա եւ շրջակայ երկիրներ:

Պաշտօնէւորիւն եւ Ուսուցչական կազմ. — Մեր պաշտօնավարութեան ընթացքին մենք վայելցինք քրտեռանդն զործակցութիւնը 30 հոգիւնոց ուսուցչական կազմի մը: Անոնցմէ, չորսը կը պաշտօնավարէին Մանկապարտէզի բաժնին մէջ, զրկաւորութեամբ բազմամեայ եւ փորձառու Մանկապարտէզականօճի Օր. Տիգրանօճի Նալպանտեանի, իսկ մնացեալ 26ը Նախակրթարանի եւ երկրորդական վարժարանի բաժնիներու մէջ: Այս ուսուցիչներէն վեցը Ս. Յակոբեանց Մխարանութեան եպիսկոպոս եւ վարդապետ Հայրենէն են:

զատ ուսանող, որոնք այս տարի մասնակցեցան Ճէնէրալ Սրբիլիֆիլէյթ ալ շնորհէրէն ըննութեան:

Մեր մասնաւոր խնամքին առարկայ եղած են նաեւ Նախակրթարանի եւ Մանկապարտէզի բաժնիները: Անծամբ հետեւեցանք դաստիօսութիւններու ընթացքին. ամէն եռամեայի վերջը աչքէ տեսչուցինք թոյր պարտականութեանց տետրակները:

Իսկ մեր Մանկապարտէզի կրթական մակարդակը աւելին է բուն սովորական Մանկապարտէզի մը կրթական մակարդակը. անոր համար որ մեր Ծաղիկ դասարանը կը գտնուի նոյն մակարդակի վրայ ինչ



Ս. Թարգմանչաց Վարժարանի ուսուցչական կազմը եւ շրջանաւարտներ

Հանդիսաւոր այս առիթով միայն շնորհակալութեան եւ զեաճատանքի խօսք ունիմ մեր պատուական ուսուցչական կազմին, թոյլուն ալ ազնիւ եւ քերթօրէն համագործակցող ինչ որ մեր զարթոյցական ընդհանուր գործին յաջողութեան զլխաւոր պայմաններէն մէկն է:

Կրթական մակարդակի բարձրացում. — Մեր վարժարանին համար նշանակելի եւ պատմական տարի մըն է այս տարին, երբ Ս. Թարգմանչաց Վարժարանէն ներս ունեցանք երկրորդական կրթութեան բաժին մը եւս. իր չորս դասարաններով, ու 40ի մօտ երկսեռ աշակերտներով: Ու պահ մը համարժեակութիւն կուտամ ինրզինքիս ըսել որ մեր երկրորդական վարժարանը երուստղէմի իր տեսակի կրթական ձեռնարկներուն լաւագոյններէն է: Մեր այս ձեռնարկը այսօր արդէն իսկ տուած է իր աւագին հունձըր. 5 շրջանաւարտներ եւ մէկ ա-

որ են օտար Նախակրթարաններու առաջին դասարանները:

Այս տարի եւս մեր երկրորդական եւ Նախակրթարանական բաժնիներուն մէջ ուսուցուեցան չորս լեզուներ՝ Հայերէն (աշխարհաբար եւ գրաբար), Անգլերէն, Արարերէն եւ Ֆրանսերէն: Իսկ Մանկապարտէզի Ծաղիկ դասարանին մէջ Հայերէն, Անգլերէն եւ Արարերէն երեք լեզուները: Այս գլուխին յարկցաբար պէտք է ըսել որ մեր ուսուցչական կազմի անդամներէն կարեւոր թիւ մը (վեց հոգի), տարիներու փորձառութեամբ լեզուն օտարներ են. ինչ որ մեծապէս կը նպաստէ մեր զարուէն: Ներս օտար լեզուներու խօսակցական վարժութեան:

Գիտական դասերու անհրաժեշտ տարրալուծարանի մը կազմութեան ձեռնարկած էինք Նախորդ տարիներուն: Բանակցութեան մէջ ենք հնդկական ընկերութեան մը հետ, ոյուն արդիւնքը պիտի ըլլայ

մեր տարրալուծարանին կրկինով ընդարձակումը յառաջիկայ Օգոստոսը հաւարած:

Իրրեւ ձեռական աշխատանք. աղջիկներու համար ունեցանք ամենօրեայ ձեռագործի պահիր: Որոնց արդիւնք մեր տարեկան պազարի ձեռագործները՝ արդէն իսկ կը վկայէին թէ. ինչ խնամք եւ ուշադրութիւն ընծայուած է մեր դպրոցէն ներս ձեռագործական արուեստի յառաջդիմութեան համար:

Ոգի. — Դժուար պարագայ մը թէ իրրեւ տարեկան սահմանում եւ թէ իրրեւ իրագործում: Կ'ուզենք եւ կը ծրագրենք որ մեր տղաքը բլլան լաւ բրիտանեաներ, ինչ որ ըսել է լաւ մարդեր, եւ ապա նաեւ լաւ դաստիարակուած առողջ մտածող մով հայեր: Ասոր համար բոլոր դասարաններու յատուկ ունինք կրօնագիտութեան եւ հայագիտութեան դասեր, որոնց կ'ընծայենք մասնաւոր ուշադրութիւն:

Հրահրելու համար աշակերտներու կրօնական ապրումները ամէն նիւրախի եւ ամական առիթներով անոնք ներկայ եղան եկեղեցական արարողութեանց, գործնականապէս մասնակցեցան մեծ սօնախմբու թիւններուն ու տարուայ ընթացքին Ս. Զատիկի. Ս. Ծննդեան եւ Ս. Թարգմանչաց տօներու երեք առիթներով մասնակցեցան նաեւ Ս. Հաղորդութեան շորհուրդին: Մեր կողմէ մասնաւոր կարգադրութեամբ Ս. Հաղորդութեան շորհուրդին մասնակցեցան նաեւ օտար վարժարաններու հարիւրի մօտ հայ ուսանողները:

Մարզական կեանք. — Ամէն առաւօտ տղար կ'ունենան մարզանքի վարժութիւններ: Այս տարի բաժնուած էին երկու խումբի՝ «Ազա» եւ «Մասիս», որոնք իրենց մարզական վարժութիւններէն գատ ունեցան նաեւ ֆութբոլի, պասկէթբոլի, վոլեյբոլի, փինկ-փոնկի փորձեր եւ միջխմբական մրցումներ: Իսկ աղջիկներ՝ բաժնուած «Երեւան» եւ «Սեւան» խումբերու, դարձեալ ունեցան իրենց մարզական վարժութիւնները:

Տղոց եւ աղջիկներու խումբեր իրենց միջխմբական մրցումներէն գատ. օտար խումբերու հետ եւս ունեցած են հանդիպումներ հետեւեալ արդիւնքներով. —

11 ֆութբոլի մրցումներէն ճիւղ ի նպաստ վարժարանիս. 2 վոլեյբոլի մրցումներէն 1ը ի նպաստ վարժարանիս. 2 փինկ-փոնկի մրցումներէն 1ը ի նպաստ վարժարանիս:

Խաղարանի շինութիւն. — Վարժարանս զօրկ է ընդարձակ եւ կազմակերպուած խաղարանի մը առաւելութենէն, հետեւաբար անցեալ Դեկտեմբերին լեցուցինք այս պակասը եւս: Ասոր համար պէթոնով սալաշատակեցինք վարժարանիս ետեւ գտնուող հողաշերտը: Անոր մէկ մասին վրայ հաստատուեցան պասկէթբոլի սարուածքը. իսկ միւս մասին վրայ եւրոպական դպրոցներու յատուկ խաղալիքներ ինչպէս պահակներ, օրօրոցներ եւայլն:

Խաղարանը մեծ խանդավառութեան առիթ մը եղաւ մեր փորձիկներուն համար. կրնանք ըսել որ այս սարուածքով անկաւ նրուսդէմի մէջ միակն է:

Սկսնակական շարժում. — Մեր տեսչական պաշտօնավարութեան առաջին օրէն իսկ Սկսնակական շարժումը մեր դպրոցէն ներս նկատեցինք մաս

մեր դաստիարակչական գործին, վասնզի Սկսնակական թիւնք իր տխրիկինով. իր ուսուցումներով, իր ոգեկանութեամբ, ուրիշ բան չէ եթէ ոչ աղուն մէջ զարգացումը կարգ ու կանոնին բմբոխումին, բաշտակներով թիւնք ազնուական ապրումներու, ու մշակումը ֆիզիք առողջութեան, հետեւաբար, ձեռնարկեցինք մեր վարժարանի յատուկ Սկսնակական խումբերու կազմակերպութեան: Մինչեւ 1957 որպէս նուիրակ մեր Ամերիկա մեկնումի թուականը մեր Սկսնակական խումբերու թիւը հասած էր 100ի (40 Սկսնակներ եւ 60 գայիկներ) եւ սակայն մեր վերադարձին այս խումբերը գտանք բայրայուն: Հետեւաբար, առանց յուսահատելու այս տարի անգամ մը եւս վերսկսանք կազմակերպել մեր Սկսնակական խումբերը: Այսօր ունինք 13 սկսնակներ եւ 30 գայիկներ: Վստահօրէն կը հաստատենք թէ յառաջիկայ տարուայ ընթացքին, այս թիւը պիտի բլլայ կրկնապատկուած: Մեր Սկսնակականներն են վարժարանիս աշակերտներէն Յովսէփ Եղիայեան եւ Պօղոս Աբրահամեան:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Արեւելներ. — Դարձեալ մեր տեսչութեան սկիզբը կազմակերպեցինք Արեւելներու եւ Արժուիկներու խումբեր գլխաւորութեամբ Օր. Ազնիւ Եղուպեանի եւ օժանդակութեամբ Օր. Նուարդ Աբրահամեանի: Այս խումբերը ցայսօր առանց ընդհատի շարունակած են իրենց գոյութիւնը: Մեր Արեւելներու թիւն է 36, իսկ Արժուիկներուն 70: Թէ մեր Սկսնակներն ու Գայիկներն, եւ թէ Արեւելներն ու Արժուիկները ամէն շաբաթ կ'ունենան իրենց դաստիարակութիւնները, ընկերային հաւարոյթներն ու պտոյտները: Վարժարանիս ծախքով այս տարի մեր բոլոր Սկսնակներն ու Արեւելները ունեցան իրենց նոր համազգեստները:

Ս. Թ. Շրջանաւարտից Միութիւն. — Դպրոցի հովանաւորութեան տակ ունինք նաեւ նախկին երկսեռ Շրջանաւարտներու Միութիւնը: Անոնք տարուայ ընթացքին հայթայթեցին երկուստեանց մը ազգայնական աշակերտներու դասակարգներ: Իսկ ամէն նիւրակի կ'ունենան իրենց գրական եւ ընկերային հաւարոյթները դասախօսութիւնները, պտոյտները եւ այլն:

Շինուածական. — Շրագրուած աշխատանքով նորոգութիւններու սկսած ենք նաեւ վարժարանի շէնքին մէջ:

Տարեկան իրրեւ Ամերիկայի մէջ դպրոցի նուիրահաւարութեանց արդիւնքէն մօտ 1000 տղար յատկացուեցաւ տալյաշատակելու համար վարժարանի երեք ընդարձակ տանիքները: Այսպէս առաջըր առնուեցաւ ձմեռնային եղանակներու աշակերտներու ենթարկուած անտանելի վիճակին, որովհետեւ միւն ու անձրեւը շատ առատօրէն կը թափանցէին մեր վարժարանին առաստաղներէն ու կը վնասէին նաեւ շէնքին:

Մեծածախս նորոգութեան կը կարօտէին մարուր ջուրի ջրամբարները, հետեւաբար 50 տիւնարի ծախքով մը շինել տուինք միակտուր նոր եւ ընդարձակ պէթոնէ ջրամբար մը, որով վերջ տրուեցաւ նաեւ ամառնային տօթերուն վարժարանէս ներս ջուրի

պակասի անպատեհության հարժարանիս վարի յարկի բոլոր պատահանները տպագրվեցին Երկաթեայ ցանցաթելով. որուն համար ծախսեցինք մոտ 70 տիւար. ու այսպէս խնայուած պիտի ըլլան մշտապէս կտրուելու ենթակայ ապակիներու ամէն օրեայ ծախսերը:

Տնտեսական. — Մեր կրթական գործին ծաղկման զուգընթաց, եռապատիկ աւելցած է նաեւ վարժարանիս ծախսոց զուտը. ըստ նախահաշիւի (պիտե՛ն) մեր տարեկան ընդհ. ծախսն է 4.400 տիւար: Այս ծախսը հաւասարակշռած ենք հետեւեալ մուտքերով:

Նախօրոյ տարւոյնէ պատաս	Տիւար	200
Ամսաթուակներէ		600
Ունեւայէն		500
Ն. Պ. Կիւլպէնկեանէն		350
Կիւլպայի Կիւլպէնկեան Ֆոնէն		350
Համասերաստանայ Վերաշինաց Միութենէն		125
Հավրոս Գարակէօզեան Հիմնադրութենէն		390
Վարդանանց Սպէսներու Եղբայրակցութենէն		350
Պրոէն (Հայ Ուսանողներու Ամերիկանայ Բարեկամներէն)		160
Վանառեալ գրեմք		500
Պագարէն		360
Հանդէսներէ եւ այլ մանր հասոյքներէ		50
Կրթասէր ազգայիններու նուէրներով փակուած բաց		675
		4.400

Բարերարներ. — Ձեռք կրնար փակել մեր տեղեկագիրք առանց անդրադառնալու այն բոլոր ազնիւ ու կրթատէր հոգիներուն եւ կազմակերպութիւններուն որոնք իրենց մեծ կամ փոքր նպաստներով ապահովեցին մեր վարժարանէն ներս կրթական կարեւոր նուաճումներ: Ենթահաշիւութեամբ եւ զոհունակութեամբ կը յիշենք անունները հետեւեալ նուիրատուներուն. իրենց նուիրատուութիւններով միասին:

Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութիւն	Տ. Յ.	
Ամերիկա		350.000
Հանգ. Ներսէս Պ. Կիւլպէնկեան, Լոնտոն		350.000
Հավրոս Գարակէօզեան Հիմնադրութիւն, Նիւ Եօրք		390.000
Կիւլպայի Կիւլպէնկեան Ֆոնտ, Նիւ Եօրք		350.000
Ունեւայի կազմակերպութիւն Երաստղէմ		500.000
Համասերաստանայ վերջ. Միութիւն. Ամերիկա		125.000
Պրոտ (Հայ Ուսանողներու Ամերիկանայ Բարեկամներ)		160.000
Էվընթսթընի Եկեղեցատէր Տիկնանց Միութիւն (Տիկ. Այրիկ Ուոլթըր Վարդանի միջոցաւ)		36.000
Արշակ Օտապաշեան. Ֆիլասթէլիա		10.000
Թաղէս Թամուզեան, Եդես		7.500
Կիւլ Այվազեան, Նիւ Եօրք		7.500
Համաստուհի Ամէթեան, Թալաւրի		7.500
Սիրար Գալֆայեան, Եդես		7.250
Արմէն Մէնէնտեան, Եդես		7.250

Տ. Կարապետ Ա. Քոչ. Գալֆայեան, Եդես	7.250
Արսէն Խակէնտէրեան Եդես	7.250
Հուսի Ասլանեան. Շիքակո	7.500
Ժ. Մ. Յովհաննէսեան, Ֆրէզնո	7.500
Պօղոս Մանուկեան. Ֆրէզնո	7.500
Սիմոն Ժինկօզեան, Տիքոյոյ	8.000
Նազար Հիմալեան, Նիւ Եօրք	7.000
Ովսաննա Տ. Յակոբեան, Պասաք	9.000
Մ. Միքայէլեան, Պասաք	9.000
Աւետիս Սվաճեան, Նիւ Եօրք	9.000
Կոմիտաս Ակուր, Ուաթըրթուր	17.000
Ս. Պոյաճեան, Պասաք	9.000
Ա. Խորասաֆեան Բասասփա	9.000
Ս. Հմիրիկեան.	9.000
Քոյ Ասոյեան.	9.000
Սահակ Վարդանեան, Ռէյսի	9.000
Կիւլ Այվազեան, Նիւ Եօրք	3.700
Երուանդ Յակոբեան, Նիւ Եօրք	9.000
Ա. Բարիշեանեան. Ռիչի	9.000
Ժ. Գարակէօզեան, Ֆրէզնո	8.000
Ալիս Փիրան, Նիւ Եօրք	8.465
Մէտհրիպէ Թիմուր, Լոս Անճէլըս	8.465
Հուսն Դաւիթեան. Քիլկլէն	8.400
Ա. Համբըլեան, Պասաք	9.015
Քիւթանիոյ Վերջ. Միութիւն. Նիւ Եօրք	42.000
Սիմոն Շմառնեան, Նիւ Եօրք	9.000
Գ. Կարապետեան, Ֆիլասթէլիա	8.900
Զարի Աշեան, Ռիչմոնդ	8.600
Սեդրակ Սուլթան. Ֆիլասթէլիա	8.200
Է. Ս. Վայ. Օ. Է., Ֆրէզնո	9.000
Հոկիսիմէ Ասլանեան. Շիքակո	9.000
Մարթին Արզարեան, Տիքոյոյ	9.000
Թ. Դանիէլեան, Պասաք	9.000
Միկայիլ Սամարեան, Տիքոյոյ	9.000
Յ. Ա. Քալլիզ, Ուոլեն	8.500
Սառա Խոյիկեան, Պասաք	8.500
Ն. Թաշեան, Եդես	11.000
Տիկնի Կիւլ Այվազեան, Նիւ Եօրք	11.000
Համաստուհի Ամէթեան, Թալաւրի	10.000
Ալիս Կիրեղեան, Ֆրէզնո	9.250
Խրէնա Թամուզեան, Լոս Անճէլըս	11.000
Հայաստան Պէյրըր, Ֆրէզնո	11.000
Հէրի Դաւիթեան, Եդես	18.000
Է. Ս. Վայ. Օ. Սի, Կեդրոնական Ժողով	8.300
Դաւիթ Վարդանանց, Ամերիկա	84.800
Կարօ Գազէզեան. Շիքակո	9.000
Վարդան Խոյիկեան. Շիքակո	9.000
Սրբուհի Պաուկեան, Նիւ Եօրք	9.000

Շջանաւարներ. —

- Ա. — Մանկապարտէզէն 34 շրջանաւարտներ:
- Բ. — Նախակրթարանէն 18 աշակերտներ:
- Գ. — Երկրորդական քաժինէն՝ 5 շրջանաւարտներ:

Փակելէ առաջ տեղեկագիրս ի զիմաց մեր վարժարանին եւ աշակերտութեան կը յայտնեմ շնորհակալութեան օրագրին զգացումներս. —

Ձերդ Բարձր Սրբազնութեան եւ Ս. Յակոբեանց քովանդակ Միաբանութեան, իրրեւ տէրն ու առաջ-

նորը, վերին հովանաւորը մեր կրթական այս յոյսի տան: Մեր երախտագիտութիւնը անհուն կը բազմապատկուի երբ կ'անդրադառնանք թէ հակառակ մեր վանքի տնտեսական տաղանակին թէ տնտեսական եւ թէ քարոյական գետններու վրայ, մեր վարժարանը երբեք չի դադարի ըլլալէ մեր Միաբանութեան առաջնակարգ մտահոգութիւններէն մին: Շնորհակալութիւն մեզի գործակից համայն ուսուցչական կազմին:

Շնորհակալութիւն մեր կրթական աշխատանքի բոլոր քարեկաններուն, որոնց կարգին նաեւ Ամերիկայէն Օր. Լիլիա Գարակէօզեանին, Տիկին Արտեմիա Գարակէօզեանին Պրնյր. Հայկ Գալուրճեանին. Յակոբ Անտոնեանին. Յակոբ Տէրաճեանին, Գէորգ Զամիչեանին» (Պէլյուրթ):

Հանդէսի աւարտին, Ամեն. Ս. Պատրիարքը կատարեց վճարականներու եւ մրցանակներու բաշխումը: Նախակրթարանի 18 եւ երկրորդական րաժնի 5 երկուսն չըջանաւարաներուն ու յաջող աշակերտներուն եւ հանդէսը փակեց ուսանողներուն եւ ձեռններուն ուղղած իր շատ սոցաւորիչ յորդորականով:

ԱՄՍՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍ

ԺԱՌԱՆԴԱՆՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Եւ

ԸՆԾԱԿԱՆՈՐԱՆԻ

10 Յուլիս. Զորքըջարթի, երկնայեան ժամը 7-9, կատարուեցաւ ժողով. վարժարանի եւ ընծայարանի ամսօրէի մրցանակաբաշխութեան հանդէսը. վարժարանի հանդիսաւորներէն մէջ, Հանդէսին կը նախագահէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ներկայ էին Միաբան Հայրեր, ուսուցչներ ու հրաւիրեալներ:

Հանդէսը սկսաւ Վերտի Բարտ վարժարանի քայլերգով. որով ետք Պեր. Տեսուչ Սրբազանը ըրաւ հակիրճ քայման խօսքը: Ընծայարանի րաժնէն Բար. Սիմոն Սրկ. Խաչատուրեան եւ Բար. Վարդան Սրկ. Զաքարեան տուին խնամուած րանախօսութիւններ օրուան տօնին մասին (Ս. Թարգմանիչ վարդապետներ): Իսկ ժառ. սաներ մասնակցեցան խմբերգներու, մեներգներու եւ հայերէն (գրաբար եւ աշխարհաբար). արարերէն եւ անգլերէն լիզուներով արտասանութիւններու: Բարձրագոյն դասարանի ժառանգաւորներ վարդապետ ինքնագիր շարագրութիւններ:

Լինդ վայրկեանի դադարէ մը ետք սկսաւ հանդէսին երկրորդ մասը. շնամենայ Մոլիսիայի շարականով: Ապա վարժարանի Տեսուչ Պեր. Տ. Հայկազուն ելաւ. կարգաց դպրոցի տարեկան տեղեկագիրը, որով կ'ընենք հետեւեալ մէջբերումները.

«Այս հանդիսաւոր պահուն վարժարանի Տեսուչներ իր ուսուցչական կազմով ու ուսանողութեամբ

միասին կը յայտենն իրենց սրտագին շնորհակալութիւնները Զորք Ամենապատուութեան, Պատուաբան Միաբանութեան եւ Պատ. Տնօրէն Ժողովոյ անդամներուն, որ չզրացար ամէն բարիք, իրենց կարելիութեանը սահմանին մէջ. հանդէպ այս վարժարանին, տնտեսական մեր այս նեղ կացութեան մէջ:

Այս հաստատութեան է որ սլաի ելլեն հոգեւոր եւ քարոյական մշակներ մեր եկեղեցիի ու դպրոցներու. եւ ազգին ծով կարիքներուն համար ծառայող հոգիները: Հունձք բազումք են եւ մշակք աւելաւ: Տիրոջ այգին է նոյնպէս ժառանգաւորաց վարժարանը իր ընծայարանով: Աշխատիք, յոյժներ, զատներ քարի հոգիները անոր մէջէն ու ընծայներ Աստուծոյ սուրբ տեղանին ի սպասաւորութիւն:

Ա. — Հոգեւոր հունձք. — Ուրախ ենք յայտարարելու թէ անցեալ տարուան տարեփակէն վերջ ժառանգաւորաց վարժարանը տուաւ ութ Սարկաւազներ. որոնք ծնունդորուեցան 1956 Օգոստոսին, եւ այս տարուան Յունիսին ալ ծնունդորուեցան չորս կուսակից Արեղաններ. (եւ եւթը Սարկաւազներ). ամէնքն ալ գիտակից եւ իրենց կոչումին տէր երիտասարդներ:

Բ. — Կրօնական եւ եկեղեցական կեանք. — Դպրոցական այս տարեջրջանի ընթացքին, ուրախ եմ յայտնելու թէ մեր վարժարանէն ներս չպակեցաւ եկեղեցական պաշտամանց մէջ տղոց ծառայութեան ոգին. նոյն ոգին ցոյց տուին նաեւ Բարեշնորհ Սարկաւազներ: Մեր աշակերտները եւ Սարկաւազները միշտ յոժարակամ ցոյց տուին մանաւանդ Սրբաւորեցեաց մէջ իրենց ծառայութեան ոգին. որ լուսաւոյն Նիւրը իր բերէ իրենց Աթոռաւորութեան:

Գ. — Երթական կեանք. — Անցեալ տարուան Սեպտեմբերի վերջերի եւ Հոկտեմբերի սկիզբները Սուրիայէն եւ Լիբանանէն հասան 12 նոր աշակերտներ. որոնք թաժուելով իրենց ախրթանի գասարաններուն վրայ, Հոկտեմբեր 2ին բացուեցաւ վարժարանը չորս դասարաններով. եւ ընծայարանը երեք դասարաններով: Ժառանգաւոր աշակերտներուն ընդհանուր թիւն էր 27, իսկ ընծայարանի Սարկաւազացի՝ 12: Ուսուցչական կազմը բաղկացած է Զորք Ամենապատուութեանէն. Սրբազան Հայրերէն, հոգեշնորհ վարդապետներէն, Բարեշնորհ Սարկաւազներէն եւ յարգելի աշխարհական ուսուցիչներէ. որոնց ցանկը եւ դասուսանողութեանց մանրամասնութիւնները հրատարակուած են մեր Օրացոյցին մէջ:

Այս հանդիսաւոր ուղթի Տեսութիւնը հրապարակաւ իր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնէ իր ուսուցչական լրիւ կազմին, որոնք իրենց ամէն կարելին ըրին որպէսզի վարժարանը հասնի իր իսկական նպատակին: Ցաւ ի սիրտ կը յայտենենք թէ, քաղաքական ինչ ինչ պայմաններ եւ կարգ մը ալ դէպքեր, ազդեցին մեր կրթական գործի կանոնաւոր ընթացքին: Երբ քաղմանք որ յառաջիկային չկրկնուին այս անպատեհութիւնները ու մեր կրօնական վարժարանը հասնի իր իսկական նպատակին: Վստահ եմ թէ Զորք Ամենապատուութիւնը յառաջիկայ տարուան համար կ'ընէ անհրաժեշտ կարգադրութիւնները, ուսուցչական կազմին մէջ եւ այլ խնդրոց նկատմամբ, ժառանգաւորաց վարժարանը եւ ընծայարանը վերածելով իր նպատակի հասունութեանը:

Գ. — Մշակութային կեանք. — Ժառանգաւորաց վարժարանի և Ընծայարանի ուսանողութիւնը ունի իր ժառանգաւոր պարտերաթերթը, ուր երեւան կուգան տղոց միտքի արդիւնները գանազան սեռերով: Յարող լոյս տեսած են չորս թիւեր 70 — 80ական օրինակներով: Ունին նաեւ ամուսնական եղանակին բնթերցասրահ մը. ուր կը հաւաքուին 30է աւելի կրօնական և զրական ամսագրեր. ամէնքն ալ նուէր ժառանգաւորաց վարժարանին հրատարակչներու կողմէ: Մեր շնորհակալութիւնը գանձեր առաքողներուն: Ասոնցմէ զատ տղարբ կը գրադին նաեւ շաբաթականներու ռազմագրութեան գործով, նոր գնուած Սթէնսլի մեքենային վրայ:

Ծ. — Առողջապահական կեանք. — Գոհութիւն Աստուծոյ. այս մէկ տարուան ընթացքին չենք ունեցած ծանր և մտահոգիչ հիւանդութիւններ: Եղած են պատահական տկարութիւններ, որոնք շուտով անցած են: Տղարբ ունին իրենց հիւանդանոց — քիւնիքը, և իրենց մէջէն ընտրուած են հիւանդապահներ, որոնք հոգ կը տանին իրենց տկար ընկերներուն:

Ջ. — Դիւղագնացութիւն և օդակն պոյսներ. — Անցնող տարուան ամառուան երկու ամիսներու ընթացքին. աշակերտութիւնը և Սարկաւազները երկու խումբերու բաժնուելով մէկական ամիս Բնթդեհէմի Գարուն — Տէրի հովոց գացին. և հոն անցուցին իրենց ալմախուրդը. նոյն առեւն մասնակցելով նաեւ Բնթդեհէմի Ս. Իննդեան Տաճարի ժամբարաններու և պատարագներուն: Խակ տարուան ընթացքին ունեցան գանազան օրական պոյսներ յերիւրով և Վատի — Զրիթ և ուրիշ վայրեր:

Է. — Առօրեայ կեանք. — վարժարանիս առաջնին կեանքի ուղղակի հսկիչն է ֆոխ-Տեսուչ Նոգ. Տ. Կորիւն վրդ. Մանուէլեանը որ ջանք չի խնայեր վարժարանիս աշակերտներուն վարժեցնել տանական գործերու իրենց պարտականութեանը մէջ: Մեր առաջին գործերը հետեւեալներն են: — Վերահսկողութիւն ժառանգաւորաց գրադարանի. սերտարանի. Տեմարանի նշարաններու, շորատան. խաղարանի. բազմիւրի և հիւանդանոց-քիւնիւրի: Այս գործերուն կանոնաւորմանը մէջ ֆոխ-Տեսչին կ'օգնեն նաեւ Սարկաւազների սիրայօժար իրենց ծառայութեամբը:

Ը. — Մարզական կեանք. — Աշակերտութիւնը բաժնուած է երկու խումբերու Կարմիր և Կանաչ: Վարժարանէն ներս ունինք չորս պարտաւորիչ խաղեր ֆութպոլ. պասթիլֆպոլ վոլիպոլ և փինկ փոնկ: Ունեցած ենք գանազան խումբերու հետ խաղարկութիւններ, որոնց մէջէն մեծաւ մասամբ յաղթող հանդիսացած են մեր աշակերտները, մասնաւորաբար ֆութպոլի խաղերուն մէջ: Խակ Կարմիր և Կանաչ խումբերու ախպրանական մրցումները տեղի ունեցան այս տարուան Յունիսի 43 — 46 օրերուն:

Փակելէ առաջ Տեղեկագիրը մեր միտմեայ գործունէութեան այս վարժարանէն ներս. դարձեալ հրապարակաւ պարտք կը զգամ մեր շնորհակալութիւնները յայտնել Զերդ Ամենապատուութեան, մեր Միաբանութեան քովանդակ կազմին. ինչպէս նաեւ ուսուցչական կազմի ամբողջութեանը, ֆոխ Տեսչին և Բարեշնորհ Սարկաւազներուն, և բոլոր այն պաշ-

տօնեաներուն, որոնք իրենց սրտանուէր ծառայութիւնը կը բերեն այս Յարկին:

Նոյնպէս չեմ թերանոր այս հանդիսաւոր պահուն հրապարակաւ յայտնել մեր շնորհակալութիւնները բոլոր այն ազնիւ հոգիներուն, որոնք հոս են և կամ ի սփիւռս աշխարհի ցրուած՝ անհատական-անձանց, պաշտօնական Մարմիններու, Միութեանց և կազմակերպութեանց, որոնք քարոյսալէս և նիւթալէս կը սատարեն ժառանգաւորաց վերելքին և քարգաւաճման ամէն տեսակէտով: Թող Բարին Աստուած վարձատրուի լինի այս բոլոր քարի հոգիներուն:

Տեղեկագիրը ընթերցուէն ետք, Ամեն. Ս. Գառիարք Հայրը բաժնեց ուսումնական և մարզական հիւղերու. ինչպէս նաեւ վարքի մէջ յաջող սաներուն մրցանակները ու իր փական խօսքէն ետք օրհնեց ներկաները Պահպանիչով: Միաբերան երգուած Հայր մերով վերջ գտաւ հանգէտը:

ԳՐԻԳՈՐ ԳԷՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԿՏԱԿ

Կալկաթայէն Գր. Գրիգոր Գեորգ Կարապետեան կտակաւ երուսաղէմի Հայոց Վանքին կը թողու իր հարստութիւնը որ կը հասնի մօտաւորապէս 50 հազար սթերլինի: Այս գումարին առկառը, ըստ կտակի տրամադրութեան, պիտի ստանար Տիգրին Կարապետեան կտակարարի մահէն վերջ: Գր. Կարապետեան վախճանեցաւ 1 Յունուար 1956ին:

Կինը սակայն օգտուելով իր ամուսնոյն հիւանդագին վիճակէն շինել տուած է նոր կտակ մը և ստորագրել տուած է ամուսնոյն՝ վերջնայանգիտակից վիճակի մէջ եղած միջոցին: Ըստ այս նոր յերիւսուած կտակին ամբողջ հարստութիւնը կը փոխանցուէր տիկնոջ:

Ս. Աթոռս իր իրաւունքներուն տէր կանգնելով՝ զատ բացած էր այս զեղծարարութեան դէմ: Ուրախ ենք ըսելու որ դատը վերջացաւ ի նպաստ երուսաղէմի Աթոռին:

Այս դատի յաջողութեան մէջ յոյժ կարևոր դեր կատարեցին Գարունայք Գ. Բ. Ալեքսի և Գ. Գ. Արգար, Կալկաթայի Ս. Նաղարէթ եկեղեցւոյ հոգաբարձուները, որոնք Գառիարքարանիս կողմէ փոխանորդ նշանակուած են այս դատի հետապնդումին մէջ: Ամեն. Ս. Գառիարք Հայրը շրկեց իր զնահատանքի և շնորհակալութեան գիրը Օգոստ. 7ին այս պատուական աղջայիններուն:

Այս առթիւ լուսարանութեան համար կ'աւելցենք երկու կարևոր պարագաներ. ա) Կինը դիմած է վերաքննութեան, բ) Ս. Աթոռը եթէ վերաքննութեան դատը չաւի անգամ, այս կտակէն պիտի կրնայ օգտուել տիկնոջ մահէն վերջ միայն, որ տրուած տեղեկութեանց համաձայն չատ ալ յառաջացեալ տարիքի մէջ չի գտնուիր: